Հաստատում եմ.

Տնօրեն՝ **Հ. Այվազյան** Digitally signed by AYVAZYAN HOVSEP 2607590078
Date: 2023.09.25 14:33:26 AMST

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ԽՄԲԱԿԻ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

«Տանձուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Տեխնոլոգիայի ուսուցչուհի Ա.Սահակյան

ՀՄՈՒՏ ՁԵՌՔԵՐ

ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Տեխնոլոգիա առարկայի արտադասարանական խմբակի ծրագիր 5-րդ դասարանի աշակերտների համար

Շաբաթական 2 դասաժամ, տարեկան՝ 68 ժամ

2023-2024 ուսումնական տարի

‹‹ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ՀՄՈՒՏ ՁԵՌՔԵՐ›› ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

‹‹Տեխնոլոգիա››խմբակի ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով: Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից՝

1. Թեմայի անվանումը, ժամաքանակը
2. Նպատակները
3. Խնդիրները
4. Վերջնարդյունքները
5. Բովանդակությունը

Ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին հետաքրքրություններին ու պահանջմունքներին բավարարմանը:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների զարգացման վրա:

‹‹ՏԵԽՆՈԼՈԳԻԱ›› ԱՌԱՐԿԱ

ԾՐԱԳԻՐ

(Շաբաթական՝ 2 ժամ, տարեկան՝ 68 ժամ)

Նոյեմբեր

Հագուստի պատրաստման տեխնոլոգիա
‹‹Խոհանոցային թաթման, ասեղաման, սրբիչ կարել›› - 10 ժամ
Նպատակը
ՈՒսուցանել խոհանոցային թաթմանի, ասեղամանի և սրբիչի պատրաստման տեխնոլոգիական հմտությունները:
Խնդիրները
Ծանոթացնել խոհանոցային թաթմանի, ասեղամանի, սրբիչի պատրաստման եղանկների տարբերությունները և տեխնիկային:
Վերջնարդյունքներ
• Կիմանա խոհանոցային թաթման, ասեղաման և սրբիչ կարել: • Կկարողանա կարել կարի մեքենայով: • Կկարողանա կարվածքներն իրար միացնել:
Բովանդակություն
1. Խոհանոցային թաթմանի ձևում : (2 ժամ) 2. Խոհանոցային թաթմանի կարում: (1 ժամ) 3. Ասեղամանի ձևում: (2 ժամ) 4. Ասեղամանի կարում: (1 ժամ) 5. Սրբիչի ձևում և կարում:(2 ժամ) 6. Սրբիչի կարում: (2 ժամ)

Դեկտեմբեր

Հագուստի պատրաստման տեխնոլոգիա
‹‹Պայուսակ (մի քանի տեսակներ)›› -12 ժամ
Նպատակը
Սովորել նախագծել և մոդելավորել պայուսակներ:
Խնդիրներ
Ծանոթանալ պայուսակների նախագծման և մոդելավորման գործառույթներին, տեխնիկային:
Վերջնարդյունքներ
• Կկարողանա գծել պայուսակի գծագրեր: • Կկարողանա ձևել և կարել կարի մեքենայով:
Բովանդակություն
1. Պայուսակի ձևում:(4 ժամ)

2. Պայուսակի կարում: (4 ժամ) 3. Պայուսակի վրա նկարել:(2 ժամ) 4. Պայուսակի վրա ասեղնագործել: (2 ժամ)

Հունվար-Փետրվար

Հագուստի պատրաստման տեխնոլոգիա
«Գոգնոց կարել (մի քանի տեսակներ)» - 12 ժամ
Նպատակը
ՈՒսուցանել կարվածքի տեսակները, սովորել աշխատել կարի մեքենայով և կարել պարզ ձևածքով գոգնոց:
Խնդիրներ
Ձևավորել կարի մեքենայով աշխատելու հմտությունները:
Վերջնարդյունքներ
• Կիմանա կարատեսակները և գծագրի կառուցման քայլաշարը: • Կկարողանա կարել կարի մեքենայով:
Բովանդակությունը
1. Գոգնոցի գծագրի կառուցում:(4 ժամ) 2. Գոգնոց ձևելու հաջորդականությունը: (2 ժամ) 3. Գոգնոցի մոդելավորում:(2 ժամ) 4. Գոգնոցի կարում: (2 ժամ) 5. Գործվածքի հետ աշխատելու անվտանգության կանոնները: (1 ժամ) 6. Գոգնոցի վերջնամշակում: (1 ժամ)

Փետրվար- Մարտ

Նյութերի գեղարվեստական մշակում
«Կարպետ (Գոբելեն) » - 22 ժամ
Նպատակը
Սովորեցնել կարպետի տեսակները և տեխնոլոգիաները:
Խնդիրները
Ծանոթացնել կարպետ գործելու տեխնիկային և կարպետագործության տեխնիկաներին:
Վերջնարդյունքները
• Կիմանա կարպետագործության տեսակները: • Կկարողանա գործել պարզ զարդանախշեր:
Բովանդակություն
1. Կարպետի պատմությունից: (1 ժամ) 2. Կարպետի տեսակները: (2 ժամ) 3. Կարպետի նախշերի ընտրություն; (1 ժամ) 4. Կարպետ հինել:(2 ժամ) 5. Հենքաթելի ամրացում: (1 ժամ) 6. Հավասարեցնող շղթայի հյուսում:(2 ժամ) 7. Կարպետը ըստ էսքիզի :(1 ժամ) 8. Կարպետի թելերի ճիշտ ընտրություն: (1 ժամ) 9. Կարպետ գործել պարզ նմուշով: (10 ժամ)

10. Կարպետի վերջնամշակում:(1 ժամ)

Նյութերի գեղարվեստական մշակում
‹‹Ասեղնագործություն›› -12 ժամ
Նպատակը
Սովորել ասեղնագործության տեսակները և տեխնոլոգիաները:
Խնդիրները
Ծանոթացնել ասեղնագործություն նախագծման աշխատանքներին,ձևավորմանը և գործելու տեխնիկային
Վերջնարդյունքները
• Կիմանա ասեղնագործության տեսակները: • Կիմանա կարատեսակները և գծագրի կառուցման քայլաշարը: • Կկարողանա ասեղնագործել զարդակարեր և զարդանախշեր:
Բովանդակություն
1. Տեղեկություններ ասեղնագործության մասին: (1 ժամ) 2. Ասեղնագործության տեսակները: (2 ժամ) 3. Ասեղնագործության անհրաժեշտ գործիքներ և հարմարանքներ: (2 ժամ) 4. Ասեղնագործության գործվացքի ընտրություն: (1 ժամ) 5. Էսքիզի փոխանցումը գործվացքի վրա: (2 ժամ) 6. Զարդակարերի ընտրություն: Թելքաշ : (2 ժամ) 7. Ասեղնագործ իրերի որակի ստուգում: (1 ժամ) 8. Խոնավաջերմային մշակում: (1 ժամ)